

Այս ալանդակ և առասպելական իրողութեան մի մութ կէտն էլ մնում է Նւրոպալի սրբ. առաջնորդ Գեորգ եպիսկ. Իւթիւնեանի բռնած գիրքը: Նա պնդում է, որ Թոմալեան որբանոցը գոլութիւն ունի և Վռամշապուհ քահանան լանցանք է գործել, որ առանց իր գիտութեան երևան է հանել խարդախութիւնը և խեղճ հալ որբերին աղատել անլաւտ ապագայի մի գիտէ թէ ինչպիսի արկածներից:

Ուր հասանք. մի մարդ, որ իրեն պրօֆէսսոր է անուանում, հայրենասիրութեան համար տաճիկներից զստապարտուած է եղել յահուան, բանտում սարսափելի տանջանքներ է կրել և հազիւ աղատուել, ալժամ իւր դժբախտ ազգակիցների թշուառ, անմեղ որբերի դալութիւնն է ուզում շահատակել և իր համար ալ միջոցով ասպրուստ հալթալթել, սարսափելի է:

ԲԵՌԼԻՆԻ ԵՐԵՎՈՅԹԸ

Վերջին տարիներս Գերմանիայի հալ ուսանողները մի գեղեցիկ միտք լղացան, ալն է երեկոյթներ սարքելով՝ գերմանացիներին ծանօթացնել հալոց կեանքի և գրականութեան հետ. համալսարանական մի քանի քաղաքներում ալ երեկոյթները կրկնում են պարբերաբար և որոշ չափով իրենց նպատակին ծառայում: Այդ երեկոյթներին հրաւիրւում են համալսարանի ուսուցչապետները և լաւտնի անուն ունեցող դրագէտներ և բանասէրներ. երբեմն վերջիններս մասնակցում են նոյն խի երեկոյթին նախապէս պատրաստած բանախօսութիւններով և իրենց դիտողութիւններն անում մեր գրականութեան, քաղաքակրթութեան, նաև հալոց խնդրի մասին:

Վերջին տեսակէտից ալդպիսի երեկոյթներից նշանաւոր հանդիսացաւ փետրուարի 2 ին (նոր տօմարով) Բեռլինում կայացած հալկական երեկոյթը, ուր ներկայ էին շատ գերմանացի լաւտնի մարդիկ, ինչպէս օրինակ ալխ արհաւելակ դրամատուրգ Հէրման Զուդերմանը, որի պիէսներից մի երկուսը թարգմանուած են նաև հայերէն:

Այս երեկոյթի թանկագին զարդը պէտք է համարուի ժամանակակից մարդկութեան ամենախոշոր տաղանդներից մէկի, Գէորգ Բրանդէսի բանախօսութիւնը: Համակրելի պրօֆ. Կոպէնհագէնից եկել է Բեռլին լատկապէս հալկական երեկոյթին ներկայ գտնուելու և բանախօսելու համար:

Գերմանական կառավարութեան տաճկասիրական ուղղութեան (խսկապէս սեպական շահերի համար) շնորհիւ Գերմանիայում լուս տեսնող քաղաքական թերթերից շատերն այնքան էլ նպաստաւոր տեղեկութիւններ չէին տարածում Տաճկահայերի մասին և նա՝ մանաւանդ նրանց ալժամեան վիճակի վերաբերմամբ. Բրանդէսի հրաշունչ բանախօսու-

թիւնը, որ նուիրուած էր տաճկահայերի ալժմեան վիճակին, կարող է որոշ չափով մտքերի փոփոխութիւն առաջացնել լոգոստ տաճկահայերի Եթէ ալսպիսի երեկոյթներ լաճախ տեղի ունենան Եւրոպայի զանազան պետութիւնների կեդրոններում, Եւրոպայի հասարակական կարծիքը անշուշտ ազատ կ'մնալ հայերի վերաբերմամբ մոլոր և թիւր հայեացքների ճնշումից:

ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՕՐԾԱՆԵՆԱՆԻ ԿԵՆՏՔԻ ԴԵՄ

Տեղուս լրագիրներին ռուսական հեռագրական գործակալութիւնը հաղորդել էր, որ Կ. Պոլսում, ալս լուսուարի 6-ին Դում Գարուի մալր եկեղեցում սպանութեան փորձ էր կատարուել Ամենապատիւ Պատրիարք սրբ. Օրմանեանի կեանքի դէմ նոյն իսկ ս. պատարագը մատուցանելու միջոցին և թէ պատրիարքը ազատուել է մահից: Այդ առթիւ մեր Կ. Պոլսի թղթակիցը գրում է մեզ. «Ըստ սովորութեան կը մատուցանէր զս. պատարագ Ամենապատիւ Տ. Մաղաքիա ս. Պատրիարքն. Դեռ նոր բացուած պատարագի մեծ վարագույրն, մինչ Նորին Սրբազնութիւնն բուրվառ ի ձեռին հանդիսիւ կիջնէ բեմէն ի թափօր չըջիլ ի մէջ ժողովրդեան, և հազիւ երկու կարգ անցած, և ահա բոմբիւն մը կը լսուի ևս. Պատրիարքն կիմանալ իբր թէ մին իւր ուսին ձեռքի հարուած մը տուած ըլլալ կրնակէն, ուստի կը դառնալ ետեւ և կը տեսնէ որ մէկը աւտըրմանակ ի ձեռին դէպ լինքն ուղղած է, և իսկոյն լերկիր խոնարհելով կը մտնէ ախտեղ գտնուած նստարանի ներքեւ, որ ատեն կտրիճ երիտասարդ մի, ոճրագործին ձեռքի ատրճանակը կորդել ուղեւով չարաշուք դէնքին բերանէն բռնած կըլլալ, և ոճրագործը տեսնելով որ պիտի չկրնալ ազատել դէնքը, կը պալթեցունէ զայն և կը վիրաւորէ երիտասարդին մատները: Նոյն ժամուռ պատրիարքարանի բարապաններէն մին հասնելով իւր ձեռաց մէջ կառնու ոճրագործին պարանոցը, և ժողովուրդն լուսեալ և գրգռեալ կը լարձակի նորա վերալ, բալց ոստիկանք թող տուէք կաղաղակեն, մեք անորմէ տեղեկութիւն պիտի առնուամք, կըսեն և ձեռնակապ կը տանեն ոստիկանութեան նախարարին:

Եթալ ս. պատրիարքը տակաւին կարծելով թէ վիրաւորեալ չէ, չարունակենք ս. պատարագը կըսէ, բալց քահանայք և ժողովուրդք կաղաչեն որ ղգեատներն հանէ և հանգստանալ մի քիչ. և կը հանեն ի պատրիարքարան, ուր տեսնելով, որ կուրծքին ալ կողմը մեծկալ արւունաթաթաւ նշան կալ, ալն ատեն կիմանալ, թէ վիրաւորուած է, և կը մարի և կիլնալ և կը դնեն անկողնոյն մէջ. բարեբախտաբար նոյն պահուն չորս բժիշկք մէկէն կը հասնին, և գործիքով բերանը բանա-